

# SANTA MONICA-Ի ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՎԱՐԶ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

## Santa Monica-ի Նվազագույն աշխատավարձ

# \$15.00

**Ժամում**

Դրույքաչափի ուժի մեջ մտնելու օրը՝ հուլիսի 1, 2021թ.

Համաձայն Santa Monica-ի Նվազագույն աշխատավարձի վերաբերյալ որոշման՝ Մունիցիպալ օրենսգրքի Գլուխ 4.62, սկսած 2016թ. հուլիսի 1-ից՝ յուրաքանչյուր գործատու պարտավոր է յուրաքանչյուր աշխատակցին (ներառյալ ժամանակավոր և կես դրույքով աշխատակիցները), որը Santa Monica քաղաքի աշխարհագրական սահմաններում ցանկացած աշխատանքային շաբաթվա ընթացքում իրականացնում է առնվազն երկու ժամվա աշխատանք, վճարել այս ծանուցման մեջ նշված գումարներից ոչ պակաս աշխատավարձ: Դրույքաչափը կճշգրտվի յուրաքանչյուր տարի հուլիսի 1-ին, համաձայն ստորև նշված ժամանակացույցի: Գոյություն ունեն որոշակի բացառություններ և հետաձգումներ:

Գործատուներ՝ 26 կամ ավելի աշխատակիցներով	
7/1/2016	\$10.50/ժամը
7/1/2017	\$12.00 /ժամը
7/1/2018	\$13.25 /ժամը
7/1/2019	\$14.25 /ժամը
7/1/2020	\$15.00 /ժամը
7/1/2021	\$15.00 /ժամը

Գործատուներ՝ 25 կամ պակաս աշխատակիցներով	
7/1/2016	\$10.00 /ժամը*
7/1/2017	\$10.50 /ժամը
7/1/2018	\$12.00/ժամը
7/1/2019	\$13.25/ժամը
7/1/2020	\$14.25/ժամը
7/1/2021	\$15.00/ժամը

\* Կախիճորնիա նահանգի նվազագույն աշխատավարձ


Համաձայն Որոշման՝ այն աշխատակիցները, ովքեր կպաշտպանեն իրենց իրավունքները՝ պահանջելով Քաղաքի նվազագույն աշխատավարձը, պաշտպանված են հետապնդումից: Աշխատակիցները կարող են քաղաքացիական հայց ներկայացնել ընդդեմ իրենց գործատուների՝ Որոշման ցանկացած խախտման պատճառով: Քաղաքը կարող է հետաքննել հնարավոր խախտումները և կարող է պարտադրել նվազագույն աշխատավարձի պահանջները: Նվազագույն աշխատավարձի մասին օրենքի խախտումները ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալով՝

SANTA MONICA-Ի ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՎԱՐԶԻ ԶՎՃԱՐՈՒՄ

ԾԱՆՈՒՑՄԱՆ, ՓԱԿՑՆԵԼՈՒ և ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ԶԵՆԹԱՐԿՈՒՄ

ՀԵՏԱՊՆԴՈՒՄ

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ՎԱՊՎԵԼ SANTA MONICA ՔԱՂԱՔԻ ՀԵՏ՝  
(310) 458-8281 • [minimum.wage@santamonica.gov](mailto:minimum.wage@santamonica.gov) • [santamonica.gov/minimum-wage](http://santamonica.gov/minimum-wage)



SANTA MONICA-Ի ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՎԱՐԶ  
**ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ**

**Santa Monica**  
Հյուրանոցային աշխատակիցների  
ապրելու աշխատավարձ

**\$17.64** **Ժամում**

Ուժի մեջ մտնելու օրը՝ հուլիսի 1, 2021թ.

Սկսած 2017թ. հուլիսի 1-ից՝ Santa Monica-ի Հյուրանոցների գործատուները պարտավոր են յուրաքանչյուր Հյուրանոցի աշխատակցին (ներառյալ ժամանակավոր և կես դրույքով աշխատակիցներին) վճարել այս ծանուցման մեջ նշված գումարներից ոչ պակաս աշխատավարձ: Սկսած 2018թ. հուլիսի 1-ից դրույքաչափը կավելանա յուրաքանչյուր տարի Սպառողական գնի ինդեքսով (Consumer Price Index CPI), համաձայն Մունիցիպալ օրենսգրքի Գլուխ մաս 4.63.015-ի:

Հյուրանոցի ապրելու աշխատավարձի պահանջը, որը սահմանվել է՝ համաձայն Santa Monica-ի Նվազագույն աշխատավարձի վերաբերյալ որոշմամբ՝ Մունիցիպալ օրենսգրքի Գլուխ 4.63, վերաբերում է այն աշխատակիցներին, որոնց հիմնական աշխատավայրը մեկ կամ մի քանի հյուրանոցներում է և ովքեր աշխատանքի են ընդունվել ուղղակիորեն Հյուրանոցի գործատուի կողմից կամ Հյուրանոցի գործատուի հետ պայմանագիր կնքած անձի կողմից հյուրանոցում ծառայություններ մատուցելու համար: Մահմանման մեջ չեն ներառվում մենեջերները, վերահսկիչները կամ գաղտնի աշխատակիցները:

Գործատուն, որը պայմանագրով, վարձակալմամբ կամ ենթա-վարձակալմամբ տնօրինում է հյուրանոցի հետ կապված կամ հյուրանոցին կից տարածքները կամ ծառայություններ է մատուցում հյուրանոցում, նույնպես պետք է վճարի հյուրանոցի ապրելու աշխատավարձ: Հյուրանոցի ապրելու աշխատավարձը չի վերաբերում հանրակացարաններին:

Համաձայն Որոշման՝ այն աշխատակիցները, ովքեր կաշտպանեն իրենց իրավունքները՝ պահանջելով Santa Monica-ի հյուրանոցի ապրելու աշխատավարձը, պաշտպանված են հետապնդումից: Աշխատակիցները կարող են քաղաքացիական հայց ներկայացնել ընդդեմ իրենց գործատուների՝ Որոշման խախտման պատճառով: Քաղաքը կարող է հետաքննել հնարավոր խախտումները և կարող է պարտադրել հյուրանոցի ապրելու աշխատավարձի պահանջները: Առկա միջոցները ներառում, սակայն չեն սահմանափակվում՝ աշխատակիցների աշխատատեղի վերականգնումով, ապօրինի կերպով չվճարված աշխատավարձի վճարումով և դրամական տուգանքներով:

**ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ԿԱՊՎԵԼ SANTA MONICA ՔԱՂԱՔԻ ՀԵՏ՝**  
(310) 458-8281 • [minimum.wage@santamonica.gov](mailto:minimum.wage@santamonica.gov) • [santamonica.gov/minimum-wage](http://santamonica.gov/minimum-wage)

# SANTA MONICA-Ի ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՎԱՐԶ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

## Santa Monica-ի Վճարովի արձակուրդ՝ հիվանդության պատճառով Ուժի մեջ մտնելու օրը՝ հունվարի 1, 2017թ.

Սկսած 2017թ հունվարի 1-ից՝ գործատուները պարտավոր են Santa Monica քաղաքի տարածքում աշխատող իրենց աշխատակիցներին տրամադրել վճարովի արձակուրդ հիվանդության պատճառով համաձայն հիվանդության պատճառով վճարովի արձակուրդի վերաբերյալ Santa Monica-ի Մունիցիպալ օրենսգրքի Գլուխ 4.62.025-ի:

Գործատուներ՝ 26 կամ ավելի աշխատակիցներով	
1/1/2017	40 ժամ
1/1/2018	72 ժամ

Գործատուներ՝ 25 կամ պակաս աշխատակիցներով	
1/1/2017	32 ժամ
1/1/2018	40 ժամ


Աշխատակիցները իրավունակ են ստանալու հիվանդության պատճառով վճարովի արձակուրդ, եթե նրանք Santa Monica քաղաքի աշխարհագրական սահմաններում ցանկացած աշխատանքային շաբաթվա ընթացքում իրականացնում են առնվազն երկու ժամվա աշխատանք և որակավորվում են որպես աշխատակից, որը իրավունք ունի գործատուից ստանալու նվազագույն աշխատավարձ՝ համաձայն Կալիֆորնիայի Աշխատանքային օրենսգրքի և աշխատավարձի վերաբերյալ հրամանների՝ սուպերվաձ Կալիֆորնիայի Արդյունաբերական բարեկեցության հանձնաժողովի կողմից: Աշխատակիցները կարող են օգտագործել հիվանդության պատճառով վճարովի արձակուրդը համաձայն 2014թ. Կալիֆորնիայի Առողջ աշխատավայրի, Առողջ ընտանիքի մասին օրենքի:

Հիվանդության պատճառով վճարովի արձակուրդը կսկսի կուտակվել աշխատակցի աշխատանքի անցնելու պահից: Աշխատակիցները կարող են օգտագործել կուտակված հիվանդության պատճառով վճարովի արձակուրդը աշխատանքի անցնելուց 90 օր հետո կամ համաձայն գործատուի քաղաքականության՝ որը որ ավելի վաղ տեղի կունենա:

Յուրաքանչյուր 30 աշխատանքային ժամվա համար, աշխատակիցը պետք է կուտակի հիվանդության պատճառով վճարովի արձակուրդի մեկ ժամ: Գործատուները կարող են տրամադրել հիվանդության պատճառով վճարովի արձակուրդի ավելի մեծ նպաստներ: Աշխատակցի կուտակված հիվանդության պատճառով վճարովի արձակուրդը տեղափոխվում է հաջորդ տարի (օրացուցային տարի, ֆինակալ տարի կամ աշխատանքային տարի), մինչև վերևում նշված կուտակման սահմանագիծը, բացառությամբ կուտակում կամ տարեց տարի փոխանցում չի պահանջվում, եթե գործատուն տրամադրում է պահանջվող արձակուրդային օրերի ամբողջ քանակությունը յուրաքանչյուր օրացուցային տարվա, ֆինակալ տարվա կամ աշխատանքային տարվա սկզբին:

Համաձայն Որոշման՝ այն աշխատակիցները, ովքեր կպաշտպանեն իրենց իրավունքները՝ պահանջելով հիվանդության պատճառով վճարովի արձակուրդ, պաշտպանված են հետապնդումից: Աշխատակիցները կարող են քաղաքացիական հայց ներկայացնել ընդդեմ իրենց գործատուների՝ Հիվանդության պատճառով վճարովի արձակուրդի վերաբերյալ դրույթների խախտման պատճառով: Քաղաքը կարող է հետաքննել հնարավոր խախտումները և կարող է պարտադրել հիվանդության պատճառով վճարովի արձակուրդի պահանջները: Առկա միջոցները ներառում, սակայն չեն սահմանափակվում աշխատակիցների աշխատատեղի վերականգնումով, ապօրինի կերպով չվճարված հիվանդության պատճառով վճարովի արձակուրդի վճարումով և դրամական տուգանքներով:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ԿԱՊԿԵԼ SANTA MONICA ՔԱՂԱՔԻ ՀԵՏ՝  
(310) 458-8281 • [minimum.wage@santamonica.gov](mailto:minimum.wage@santamonica.gov) • [santamonica.gov/minimum-wage](http://santamonica.gov/minimum-wage)



# SANTA MONICA-Ի ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՎԱՐԶ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

## Santa Monica-ի Սպասարկման վճարի օրենք

Ուժի մեջ մտնելու օրը՝ հուլիսի 1, 2016թ.

**Սկսած 2016թ. հուլիսի 1-ից՝** սպասարկման վճարներ օգտագործող գործատուները պարտավոր են ենթարկվել Նվազագույն աշխատավարձի որոշման կանոնակարգերին՝ Մունիցիպալ օրենսգրքի Գլուխ 4.62.040: Սա նշանակում է, որ գործատուները պետք է՝

Վճարեն որպես **սպասարկման վճար** հավաքված ամբողջ հասույթը այն աշխատակիցներին, որոնք հիմնականում մատուցել են այն ծառայությունները, որոնց համար վճարներ են հավաքագրվել (կարող է ներառել հաճախորդների հետ չառնչվող անձնակազմը)

Վճարեն աշխատակիցներին որպես **առողջապահության հետ կապված գերաժախս** հավաքված ցանկացած հասույթ հետևյալի միջոցով՝ (i) փոխանցում աշխատակցի կողմից կառավարվող առանձին հաշվին կամ (ii) վճարում աշխատակցին որպես աշխատավարձ

- Տեղեկացնեն աշխատակիցներին սպասարկման վճարի բաշխման վերաբերյալ
- Պահեն գրառույթներ սպասարկման վճարի բաշխման վերաբերյալ

Գործատուները կարող են վճարել սպասարկման վճարի հասույթը այն աշխատակիցներին, ովքեր հիմնականում վերահսկիչ կամ մենեջեր չեն: Գործատուները պետք է հաճախորդներին ներկայացնեն նաև պարզ և ակներև ծանուցում ցանկացած սպասարկման վճարի և դրա օգտագործման վերաբերյալ:

Գործատուները կրաշխեն հյուրանոցի բանկետների կամ հյուրանոցի կողմից տրամադրված ու տեղիքի, հյուրանոցային սենյակի սպասարկման կամ հյուրանոցի բեռնակիր ծառայությունների արդյունքում հավաքագրված գումարները այն աշխատակիցների միջև, որոնք ուղղակիորեն տրամադրել են ա յո ծ առայությունները: Ա յն գ ործատուները, որոնք Նվազագույն աշխատավարձի վերաբերյալ որոշման ուժի մեջ մտնելուց առաջ արդեն ունենին սպասարկման վճարների հավաքագրման և բաշխման փորձառություն, կարող են շարունակել այդ գործելակերպը:

Համաձայն Որոշման՝ այն աշխատակիցները, ովքեր կպաշտպանեն իրենց իրավունքները՝ պահանջելով սպասարկման վարձի եկամուտը, պաշտպանված են հետապնդումից: Աշխատակիցները կարող են քաղաքացիական հայց ներկայացնել ընդդեմ իրենց գործատուների՝ սպասարկման վարձի վերաբերյալ դրույթների խախտման պատճառով: Քաղաքը կարող է հետաքննել հնարավոր խախտումները և կարող է պարտադրել սպասարկման վարձի պահանջները: Առկա միջոցները ներառում, սակայն չեն սահմանափակվում՝ աշխատակիցների աշխատատեղի վերականգնումով, ապօրինի կերպով չվճարված սպասարկման վարձի վճարումով և դրամական տուգանքներով:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ԿԱՊՎԵԼ **SANTA MONICA ՔԱՂԱՔԻ ՀԵՏ՝**  
(310) 458-8281 • [minimum.wage@santamonica.gov](mailto:minimum.wage@santamonica.gov) • [santamonica.gov/minimum-wage](http://santamonica.gov/minimum-wage)



ԱԶՆԻՎ ԱՇԽԱՏԱՆՔ, ԱՐԴԱՐ ՎՃԱՐ  
Santa Monica-ի Նվազագույն աշխատավարձ